

## ՅԱԿԱՏԱԿ

ՀԱՅԵՐԵՆ ՀԻՆ ՏՊԱԳՐԱՒԹՅՈՒՆԸ

1664

ԹՈՒԱԿԱՆԻՆ ՏՊԱԳՐԵԱԼՔ

### 1. ՍԱՂՄՈՅ. (Ը. Տպգր.)

(Տպագրեալ յԱմսդերդամ, ի Տպարանի Աւետիսի կամ Կարապետի  
(= Ռոկան):

Յիշատակարանը. — « Արդ սկիզբն էառ տպագրութիւն ասուածայնոյ տառիս ՌՈԿ եւ Դ թուոյն Քրիստոսի, յապրիլի ամսոյ միոյն, իսկ ի Հայոց թուականի Ռ եւ Ձ եւ Երից, ի մարտի ամսոյ քսան եւ երկուց, 'ի հովուապետութեան տեառն Յակոբայ սրբազան Կաթուղիկոսի վերաբազմողի յաթոռ Գրիգորի սրբոյ Լուսաւորչի որ ի սուրբ Էջմիածնի Ներ իւրում տպարանում, որ հաւատեալ եղեւ. 'ի նախանշանակեալ Մատթէոսէ սարկաւագէ. յերկրիս Հոլլանդիու ի քաղաքիս յԱմսդէլօդամի. որ կոչի աշխարհ Թլամէնկի. սպասաւորութեամբ եւ սրբագրութեամբ անարհեատ եւ անիմաստ եւ անպիտան Կարապետի Անդրբանացառյ եւ բանի սպասաւորի, աշակերտի մեծի բարունապետի տեառն Ռոկանի Երեւանեցուոյ ։

Մանօք. — Սոյն Սաղմոսէն պակասաւոր օրինակ մը կը գտնուի Վենետիկի Միջիթարեանց Մատհնաղարանին մէջ։

### 2. ՇԱՐԱԿԱՆ. (Ա. Տպգր.)

(Տպագրեալ յԱմսդերդամ, ի Տպարանի Աւետիսի կամ Կարապետի  
(= Ռոկան):

Ճակատը. — « Շարականոց երաժշտական երգեցմունք հոգեւորականը, աստուածայնոց եւ երջանկաց սրբոց վարդապետաց, Հայոց թարգմանչաց, զկարգաւորութիւնս եկեղեցւոյ վայելչացուցանողաց, ի թուոյն Քրիստոսի ՌՈԿԴԻ, եւ ի Հայոց ՌԾՋԴԻ յ'օգոստոսի ամսոյ ԺԴ. ի տպարան սուրբ Էջմիածնի եւ սուրբ Սարգսի որ յ'Ամսդէլօդամի, յերկուորգում աւուր վերափոխման տօնի Տիրամօր կուսի ։

Յիշատակարանը. — « . . . Ես նուասու, յամենից եւ անուամբ միայն բանի սպասաւորով եւ ոչ գործով. Ռոկան վարդապետս. հրամանաւ վեհափառ Կաթուղիկոսին Հայոց տեառն Յակոբայ, եկի 'ի Լիվոսանայ. 'ի նախահանդիսան գրանդուկի, յաղագս տպարանին Եւ գտեալ անդ

զեղբայրն իմ զԱւետիս զի գնայր յ' ՚իզմիւոնեայ, վասն որոյ զապարանն առի ՚ի ձեռաց նորա ձեռագրով իւրովի եւ գրեցի առ սեպհական աշակերտն իմ Կարապետ վարդապետ, որ էր յ' Ամսդերդամ, որպէս զի ըստ կարողութեան իւրոյ զգործարանն ի գործ չարժեսցէ, մինչեւ հասանելն իւր առ ինքն եւ նա շարժեալ ի գործ եւ սկսեալ զպակասորդ խազիցն տալ շինել, եւ մինչեւ ցաւարտումն խազիցն տպեալ ձեռք մի Սաղմոսարան, եւ զկնի զշարականոն, զորս եւ հասուցեալն էր մինչեւ ի զալն իմ ի կարգ համբարձման իսկ ՚ի հասանելն իմ տատ ձեռնարկեալ ետու քանդակել զնօտը գիրսդ սակս խորտագրութեան Սստուածաշնչին, որ մեծաւ ջանիւ հազիւ մինչեւ ի Գ ամիսն աւարտեցաւ, զոր սակս փորձի շարադրեցաք ի կարգս մարտիրոսաց, »

\* \* \*

## 1666

### ԹՈՒԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՌԱԿՈՆԱՅ. ՏՊԱԳՐԵԱԼՎ

#### 1. ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՌԱԿՈՆԱՅ. — (Ա. Տպգր.)

(Տպագրեալ յԱմսդերդամ, ի Տպարանի Ռոկտն վարդապետի):

Ճակատը. — «Քերականութեան գիրք, համառօտիւք ծայրագաղ արարեալ յաղագս մանկանց եւ նորա վարժից կրթութեան, ՚ի առու մատենից եւ ՚ի գիտութիւնս մասանց բանի. ըստ քերթութեան արեւոտիւ Տպագրեալ ՚ի տպարանի օրորյ իջմիածնի եւ սրբոյն Սարգսի զօրավարի. յամի փրկչին 1666, եւ Հայոց թուականի Ծճ եւ Ժ եւ ի, փետրվարի Ժ. Ալմազդերդամ քազաքի»

Յիշատակարանը. — «Զսակաւուք աշխատողս ի սմա, զնուասա անձնս Տէր Ռոկան բանի սպասաւոր յիշել աղերսեմ, զի աշխատեալ թարգմանեցի ՚ի բարբառոյ գաղմատացոցն ի Հայս, եւ անտի եւս ծալզկագաղ արարեալ կարճառօտիւք, ՚ի զրուանս ուսումնասիրաց, զյաւէտ պիտանացուան եւ զկարեւորան հաւաքեցի: Նաեւ առընթեր բնաբանին կայացուցեալ զհոլովս անուանց եւ գերանուանց եւ զխոնարհմունս բանից, կարգաւորեալ կանոնիւք եւ գլխակարգութեամբ...: Յիշեցէք զկարագետ վարդապետն զաշակերտն իմ»

#### 2. ԱՅԲԲԵՆԱՐԱՆ (Գ. Տպագր.)

(Տպագրեալ յԱմսդերդամ, ի Տպարանի Ռոկանայ վարդապետի):

Ճակատը. — «Հանգերձ Սստուծովի Գիրք Այրուբենից յաղագս նորեկ տղայոց, եւ մանկանց անկրթից, նաեւ արանց զեռ ոչ եւս ուսեւցոց, որոց լիցի օժանդակ հասանիլ ի կատարումն կրթութեանց եւ ի

վարժումն ճահապէս ընթերցողութեան Յօրինեալ ներտպարանում սրբոյ էջմիածնի, եւ սրբոյն սարգսի զօրավարին Յամսդերդամ քաղաքի ի ներթուում փրկչին 1666. իսկ հայոց Խճմարի Գ. »

### 3. ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱԾՆ. (Ա. Տպգր.) կամ ԲԱՆ ՀԱԼԻՍՏՈՅՑ.

(Տպագրեալ յԱմսդերդամ, ի Տպարանի Ռոկանայ վարդապետի):

Յիշատակարանը. — « Շարդրնցաւ բանս հաւատոյ, ռակս վարժութեան ահասից՝ ի թուին Փրկչին 1666. իսկ ի մերումս թուոյ ԽՃմ. ամսեանն Նոյեմբերի, որոյ էին աւուրք քսանեւհինք յԱմսդերդամ քաղաքի. ի սովարանի սրբոյն էջմիածնի եւ սրբոյն Սարգսի: »

Մանօք. — Այբբենարանը (= Այբուբէն), եւ Քրիստոնէականը՝ ի միոսին տպագրեալ եւ ի միասին կազմեալ են. ունին 64 էջեր միայն Օրինակ մը կը գտնուի Վենետիկի Մխիթարեան Մատենադարանին մէջ:

\* \* \*

## 1667

### ԹՈՒԱԿԱՆԻՆ ՏՊԱԳՐԵԱԼՔ

#### 1. ԺԱՄԱԳԻՐԻ ՄԵԾԱԴԻՐ. — (Բ. Տպգր.)

(Տպագրեալ յԱմսդերդամ, ի Տպարանի Ռոկանայ վարդապետի)

Ճակատը. — « Աղօթամատոյց եւ Ժամագիրք ի Հայրապետութեան տեան Յակոբայ կաթուղիկոսի սրբոյ Էջմիածնի, յԱմսդէլօդամում՝ ի թուոյն Քրիստոսի 1667. եւ հայոց ԽՃմ. ֆետրվարի ամսոյ քսան: »

Յիշատակարանը. — « Շնորհօք Քրիստոսի եւ օժանդակութեամբ ամենասրբոյ Հոգւոյն, աւարտեցաւ Ժամագիրքս, տէրութեան նահանգիս Հօլլանդիոյ Վիլհէլմուսի երկրորդի մանկագունի իշխանի, յԱմսդէլօդամի: »

#### 2. ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱԾՆ. Հայ-Լատ. (Ա. Տպգր.)

(Տպագրեալ յԱմսդերդամ, ի Տպարանի Ռոկանայ վարդապետի)

Ճակատը. — « ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆ, Քրիստոնէական ըստ Հայոց Արագրեալ առ հրօմայեցիս միջնորդութեամբ, ԿԱՐԱՊԵՏԻ ՎԱՐԴԱՊԵՏԻ, ԱՆդրիանացւոյ եւ ԹԵՇԻՌՈՒՍԵԱՆ, ՊԵՏՐՈՍԻ ՍԻՄՊՐԻ, Յամսդէլօդամի: Մախիւը եւ տպագրութեամբ թարգմանողաց Յամին Քի, 1667, եւ հայոց ԽՃմ. »

**Մանօր.** — Մատեանս է փոքրիկ ութածալ, ունի 72 էջեր։ Օրինակ մը կը գտնուի Կեսարիոյ Ս. Կարապետի վանուց Մատեանադարանին մէջ, ինչպէս նաեւ այլուր

### 3. ՄԱՇՏՈՅ. (Բ. Տպգր.)

(Տպագրեալ յԱմսղերդամ, ի Տպարանի Ոսկանայ Վարդապետի)

**Ճակատը.** — «Գիրք ՄՐԲՈՑՆ ՄԱՇՏՈՅԱՅ ՎԱՐԴԱՊԵՏԻ, Արարողութիւնք հանտպազորդեան եկեղեցեաց Հայաստանեայց Պարունակող եռթանց զիսաւորաց խորհրդունակ սրբազնագործութեանց, եւ այլոց մասնաւորաց պաշտամանց հաստատեցելոց ի հնագունից հարցն սրբոց առ ի լրումն հոգեկանին հարկաւորութեան, եւ մարմնականին պիտանացութեան, սահմանադրեցեալ օժանդակութեամբ հոգւոյն սրբոյ Տպագրեցեալ ի տպարանի սրբոյ Էջմիածնի, եւ սրբոյն Մարգսի գօրավարին. ի Հայրապետութեան աեառն Յակոբայ Կաթողիկոսի Սրբոյ Էջմիածնի, Մայիսիք եւ սրբագրութեամբ Ոսկանայ Վարդապետի եւ Արքի Նպիսկոպոսի Երեւանեցւոյ. ի յԱՄՍԴԵԼՈՂԱՄԻ, ի թուոյ Փրկչին 1667 Դեկտեմբերի. 11: Խակ ըստ հայոց, 4116, Դեկտեմբերի 1:

**Մանօր.** — Մատեանս է ութածալ. ունի 315 էջք, ինչպէս այլուր, նոյնական օրինակ մը կը գտնուի ի Կեսարիա Հայ-Պատպահանց Գերապայծառին քով։

\* \* \*

## 1668

### ԹՈՒԱԿԱՆԻՆ ՏՊԱԳՐԵԱԱՔ

### 4. ԱՍՏՈՒԱՆԱՇԱՇՈՒԻՆՉ. (Ա. Տպգր.)

(Տպագրեալ յԱմսղերդամ, ի Տպարանի Ոսկանայ Վարդապետի)

**Ճակատը.** — «Ածաշունչ հնոց եւ նորոց կտակարանաց ներ պարունակող շարակարգութեր նախնեացն մերոց եւ ճշմարտասիրաց թարգմանչաց. Խակ զկնի հրամանաւ վիհավառին տեառն Յակոբայ Հայոց Կաթողիկոսի գլխակարդեալ եւ տնատեալ ըստ Դաղմատացւոցն, նաեւ զհամաձայնութի հանուրց գրոց Աստուածաշնչից, ընդ իրեարս առ ընթեր կարգեալ ամեննեցուն նուասաի ումենմն բանի տն սպասաւորի Ոսկանի Երեւանեցւոյ ՅԱմսղերդամ, ներ տպարանաւմ սրբոյ Էջմիածնի եւ սըրբոյն Մարգսի գօրավարի, ի թուում Փրկչին 1666, Խակ Հայոց Առձենամսեանն Մարտի մհտասանին»

**Ծիշատակարանը.** — «Գոհութիւն... զի ետ կարողութե անարժան նութե իմրևմ ձեռնտուութի եւ օժանդակութի ընկերակցութի մարմնաւ

կանօք գոյիւք պայազառափառաց Ստեփաննոսի Թէոդորոսի, և Գետրոսի Զուզայեցւոյ Քանզի Ածասէրթ եւ կորովիքս այսոքիկ հայելով ի նուազութի Ածայնոց կատարանաց որ ի մէջ ազդիս հայոց, մանաւանդ վարդապետաց՝ եւ վանականաց՝ եւ գրոց աշակերտաց Վը որոյ ջերմեռանդ սիրով յօժարեալք յորդորեցին զմիմեանս, քաջակերելով եւ զիմս նուասութիւ որ սակա գոյից վարանէի, ձեռնտուք եղեն ինձ ներդորդառանութեա այսմիկ, տալով առատապէս զարիս դրամոյն ըստ որում եւ յորժամ պիտոյանար Քանզի ես իշխանութիւ եւ հրամանաւ զեհափառի Կաթու զէկուսի եւ Պատրիարքի հայկազան սեռի, ներ պատրիարքարանում որբոյ էջմիածնի լուսանկարի՝ եւ Քանչիմենցելոյ, տեառն Յակոբուս ներ թուոջ Փրկչին վեց հազարորդի (այսպէս) վեց հարիւր որդի վատաներորդի երկրորդի, Խոկ հայոց թուոյ հազարերորդի հարիւրորդի մետասաներորդի, տեպտեմբերի, թէ, ելեալ յերկրէ եւ յազգէ իմմէ դիմեցի ի կողմանս Եւրոպիոյ, յաղագս տպման մատենիս այսորիկ առառեածայնոյ, եւ բազմաւ վշտիւ եւ տառապակրութիւ եկեալ հասի ի սահմանայիտակիոյ յերկիրն թուսպանոււ 'ի քաղաքն իլիվոննայ, ներնախնում նուագում զոչ ոք գտի ինձ զօժանդակ, սակս օրոյ թողեալ զնացի 'ի Հոօմայ, գոնեայ անդ գտցի յաջողութիւն գործառնութիս, եւ անդ եւս ոչ եղեւ ինձ մխիթարութիւ օգնականութե զործոյս վոյ յոդունց պատճառաց ներականանաց, թէ ի մերտյնոց ազանց, եւ թէ ինքեանց կանոնաց եւ սահմանաց՝ զորս մի ըստ միոջէ շարագրել ձանձրութիւ է Խոկ 'ի գառնալն իմում անդրէնչիլիվոննայ յետ բազմաց հակառակութեց սուտակասպասից արանց փասքուսաց մերայնոց ազանց որք ոչ զօդուտ ազգի եւ զորբոյ աթոռոյն այլ զանձանց զցանկութիւ, եւ կամաց զհանութիւ կամիին լուուր, որոց ընդդիմակայեալ, զոչ ինչ ետուհաւանութիս բանս, այլ ընդ երից հաւատարմագունից վերոյ գրեցելոց արանց եւ Քուտիրաց՝ յետ բազմաց քննութեց եւ հարցափորձութեց միաբանեցայ սիրով՝ եւ դաշնադրականաւ գրով, զի սոքա երեքեանս ընդ իս հոգասցեն զամ զծախ վերոգրեցելոյ մատենին մինչեւ ցաւարա, առ յօդուտ ազգին եւ 'ի շահ սրբոյ աթոռոյն Բայց այսպիսի եղեւ պայմանն Քզի ի թուին, Ռձմի, Փետրվարի, ի. վերոգրեցեալ պարոն Ստեփաննոսն, եւ պարոն Պետրոսն խոստացան զաւելեալ շահն որ 'ի վաճառմանէ Ածանչոյն լինիցի տալ սր էջմիածնին նոյնպէս ուարոն Թէոդորոսն զիւր բաժնի շահ հոյ զէկէն խոստացաւ Սր Երուսաղէմի, զէկէն յուշոյ վանից որբոյն Սարգսի զօրավարին Այսու պայմանաւ եւ եւս չու արարեալ հասի ի կողմանս հիւսիսայնոյ յերկիրս Բելգինյոյ, որ այժմ կոչի Հոլլանդիայ, ի քաղաքս յԱմսէլօտամի 'ի տպարան որբոյ էջմիածնի եւ որբոյն Սարգսի զօրավարի ուրանօր եւ սկիզբն արարի տպել գրովքն զորս Աւետիսն էր յօրինեալ, զի դիրք Մատթէոսին յոյժ խոշորք էին եւ անյարմարք նաեւ զի աջ գոյր գիր վասն համաձայնութիւ եւ խորապրութիւ հարկեցայ տոնել

զնօսար գիրդ իմով գոյիւ, զոր վս փորձի եղեալ եմ ներվերջնում շարակնոցին նաեւ այսու բոլոր զրիւ որ յ'Աւետէն էր յօրինեալը որովք գրովք զսկիզբն արարաք ներ թուոջն ուզ գրեալ է ի սկզբան, եւ յաւարտ սորին ժամանեցաք ողորմութք նունոյ Տն եւ փրկչին Յի, ներ թուոջն Քի, հազարորդի վեց հարիւրորդի վատաներորդի ութերորդի, յամսեանն հոկտեմբերի, որոյ էին աւուրք երեքտասաներորդի Խոկ ըստ մերոյս հազարորդի հարիւրորդի եօթն եւ տասներորդի, ներ նոյնում ամսոյ հրոտից քսաներորդի հինգերորդի Արդ տեարք սուրբք եւ ծառայակից ի Քո, որք հանդիպիք այսմ նորաանկոց բուրաստանի, եւ Ածակերտի դրախտի՝ եւ յոդնազանի այգուոյ, եւ յեղեմարդինի քառավտակեան գետոյս, որ ոռոգեալ արբուցանէ՝ եւ բողոջեալ պտղաբերէ յոդիս բանականաց զպէսպ տեսակս առաքինութեց՝ եւ վարուց բարեաց Յիշենջիք... խանհնց պարոն ստեփաննոսն... այլ եւ զքիմէշենց պարոն թէոդորոսն... նաեւ զպարոն պետրոսն աւագենց, Ընդ նոսին եւ զհայրն իմ զպարոն թորոսն... Ընդ որս եւ զհաւատարիմ աշակերտն իմ զկարապեա վարդապետ անդրիանացի, որ միշտ եւ անձանձիր՝ տքնեցաւ ի վր սրբագրութեն եւ այլոց գործոց Այլ եւ զձեռնասուն աշակերտն իմ զյօհան սարկաւագ երեւանցի, որ զառաջներորդ փորձն միշտընթերցաւ ընդ իս եւ ընդ վարդապետին...»:

**Մանօթ.** — Այս Ածայունչ մատենէն կը գտնուի Վիեննայի եւ Վենետիկի Միսիթարեանց, եւ Կեսարիոյ Ս. Կրտ. ի Ամառնատարաններու մէջ եւ այլուր, մէյ մէկ օրինակ. կը լսենք թէյ օրինակ մըն ալ, մագաղարի վրայ տպագրուած. կը գտնուի եղեր Ս. Երուսաղէմի Ս. Յակոբեանց Մատենադարանին մէջ:

## 2. ՏՕՄԱՐ. (Ա. Տպգր.)

(Տպագրեալ յԱմսդերդամ, ի Տպարանի Ոսկանայ Վարդապետի) Ճակատը. — « Տօմարաց գիրք՝ Հայոց, Հոռմայեցւոց եւ Պարզատումար, ընդ որոց եւ Տաղ Յովասափու, Մարմիախտղաց եւ Երազական ԱԱմսդէլօգամի, յամին Քրիստոսի 1668, Հայոց թուոյ թօֆէյ »

Ցիշատակարանը. — « Ժանմք յընթերցողացդ անմեղազելի ասնել զմեզ՝ ի սղալանացն, զի ոչ ՚ի բազմաց օրինակաց ստուգեցաք՝ վասն զի ոչ գտանէին աստ, այլ ի միոյ օրինակէ որ ինչ գրեալ էր փոխազըցաք աստ, որպէս եւ խնդրեալ եղեւ յումանց ։»

## 3. ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ. (Խորենացւոյ Ա. տպգր.)

## 4. ԱՂՈՒՄԱԳԻՐՔ. (Ա. Տպգր.)

(Տպագրեալ յԱմսդերդամ, ՚ի Տպարանի Ոսկանայ Վարդապետի) Ճակատը. — « Գիրք աշխարհաց եւ առասպելաբանուեց, որ է

Աղուէսագիրք, ի Հայրապետութե Տն Յակօբայ Կաթուղիկոսի սրբոյ էջմիածնի. յԱմսթէլօդամում. ի թուոյ փրկչին 1668, եւ Հայոց Ռձմի, հոկտեմբերի ամսոյ մէկ։»

յ'Էջն 3. — « Աշխարհացոյց Մօսէսի խորենացւոյն։

յ'Էջն 65. — « Ահա Կատարեցան ամ տիեզերք եւ պատմութիք խօսից։ Ահա Կամիմ զշափ աշխարհիս համառօտել մղոնս խաղաց տնաւշափութբ, ուղղեկարար, ասպարիզանեմ զրութբ։»

յ'Էջն 69. — « Անուանք գետոց։ Այս անուանք գետոց ոչ ի Մօսէս արարեալ այլ յայլմէ։»

Մանօր. — Մատեանս է վեշտասանածաւ, ինչպէս այլուր նոյնպէս օրինակ մը կը գտնուի կեսարիոյ Ա. Կարապետի վանուց Մատեաղարանին մէջ։ Այս օրինակին մէջ ճակատին եւ վերջէն ալ քանի մը թղթեր ինկած են։ Աշխարհացոյցը 88 էջք են, Աղուէսագիրքը 211 էջք, 211 էջէն ցանկն կը սկսի աշխարհացոյցի, եւ 214 էջէն ցանկն Աղուէսագրքի։

## 5. ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆ. (Ա. ապգր.)

(Տպագրեալ յԱմսդերդամ, ի ապարանի Ոսկանայ Վարդապետի, կամ Կարապետ Վարդապետի)։

Ճակատը. — « Նոր կտակարան սրբոյ աւետարանի տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, ՅԱմսդէլօդամում, ի թուին փրկչին 1668. Փետրվարի 10, իսկ ըստ հայոց Ռձմի, Տրէի. ին։»

Օիշատականներ. — « Աւարտեցաւ նոր կտակարանս.. երկասիրութբ նուաստ Ոսկանի եպիսկոպոսի... ի տպարանի աշակերտին իմոյ կարապետի բանի տպասաւորի... բայց իմովք գրովք իսկ արդեամք երկոցուն. ցըս... ի թուոյ փրկչին 1668... յԱմսթէլօդամում քաղաքում, ի թուոյ հայոց Ռձմի... բուն նախտղափար լեալ է իմով ձեռամբ դժեալ նոր կտակարան ըզկնի Հեթմոյ Թագաւորի տառուածաշունչ սրբագրութինն գաղափար...։»

ԿԱՊԵՏ